

փրկչին մերոյ: Եւ ի հայրապետուե. սրյ. յէջմի-  
ծին. (s!) սրագան. կթղկան. տն. Աղէքսանդրին, յա-  
ռաջի ամի սորին եւ ի առաջնորդուե. սր. ուխտին Գե-  
ղարդու ահրի եւ քաջ բարունապետին Դանիէլ վրդա-  
պետին, որ է ցեղէն իշխանաց իշխան Պոօշ իշխանի, որ  
վերագրտիղուր. վարէ առաջնուի. սր. ուխտիս:

Եւ դարձլ. յիշեցէք զստացող սր. գրոյ զտր. Սի-  
մէոն կուսակըրօն արեղայն, որ եւ եռափափաք սիրով  
եւ ջերմեբանդ սրտիւ ստացաւ ըզ: զիրքս Պարապ-  
մանց, որ է արարեալ սրյն. Կորդի հյպին. (ին միա-  
սին) վասն յիշատակի հոգոյ իւրյ. եւ հոգւոյ ծնողաց  
իւրոց ի վերում. (s!) տա//

448ա. ոսպել. անձին իւրոյ. եւ սրբակրօն տր.  
Սիմոնին, որյ. յիշատակն օրհնուր. եղիցի:

Արդ երես անկեալ աղաչեմ զձեզ հայրք եւ եղբարք,  
զմիով հյր. մեր որ երկիրքեաւ յիշեցէք ստացող սր.  
գրոյս ծնողօքն հանդերձ, եւ որք յիշէք, յիշեալ լինիջիք  
ըստ ընդարոյս ողորմութե. իւրում ամէն: Հայր որ եր-  
կինս:

**224բ. Ե եղազրով.**

Յիշող. է սր. զիրքս այս Գանձուց եւ Պարապմանցս  
մղտսի. Յարուիրն. եւ կողակցուն մղտսի. Հուսնիխա-  
նին եւ որդւոյն մղտսի. Յակորին եւ ծնողացն իւր, որ  
եւ ի ձեռն Կեղեցի Իսահակ վրդապետին. որ ի ժամ կար-  
դալոյն ողորմիս տացցէ միշտ. այս եղեւ թվին ՌՃՁէ  
ամին եւ հանդիպողք տուք զողորմին:

**Կնիք փակագրով:**

Մ հասի  
Յ ար ու թն

Յիշատակն արդրոց. օրհնուր. եղիցի. եւ վերջի  
կողակից սորին Չարմանազանն եւս յիշել. լիցի ի Քս.  
ամէն:

**5ա-224բ. Գրուած է Մարգարէ գրչի ձեռ-  
քով Ստեփանոս բարունու համար:**

423բ. Չերջանիկ բարունիս զՍտեփանոս. վրդպս.  
իմ եւ զանարժան գծողակս զՄարգարէս, աղչմ. յիշել  
ի տր. սրտի մտօք եւ Ած. զձեզ յիւր ահեղ ատենին:\*

**ՅԱԻԵԼՈՒԱՄ Բ. 41.**

(No. 753 Ն. Յ. Բ. Գրքի եր. 35)

388ա. «զոր եւ իմ լուսաւորիչն եւ ամենիմաստն,  
անաւթն ընչրութե. եւ գերապայծառն, մաքուրն եւ ա-  
նարատն, սրբաւէրն եւ հոգիանորոզն, աշխատասէրն  
եւ ամենաշնորհն, կենդանին եւ մշտնջենաւորն առ տր.,  
բանաւորն եւ առատարուխն, լցեալն հոգւով եւ արդա-  
բախտն, վսեմագոյն եւ իմաստնակզծն (իմաստնա-  
տեղծն?), ցանկալին եւ խոնարհն, բարեւէրն եւ  
Քս. ունակն, աղաւթականն եւ ընթերցասէրն, ուսում-  
նասէրն եւ ածասէրն.: Քնարն հոգոյն, շառաւիղն  
ընչրութե., աւթազնաց թռչունն, բարի արմատն,  
որթն պողարեր, տաճարն բանին, տեղին Այ. աւթե-  
ւանն սր. երրորդութեանն, հոգւոյն ընդունարանն,  
բանին բաւականն, բարձոց խաչին. հետեւողն տն., սի-  
րելին Քի. եւ սիրեցեալն ի նմանէ. տրն. իմ եւ յոյս,  
ծնողն հոգեւոր եւ երջանիկ վարդապետն, Սաչատուր  
գիտնականն, ցանկացեալ ածագիծ. տառիցս, բազում  
ջանիւ եւ աշխատութր. ի մի հաւաքեաց զբանս բա-  
զումս վարդապետաց. զոր եւ ես թակարդապատեալս  
մեղաք, տգնտս յարդարութենէ. գիտողս բազում չար-  
եաց, ներդեւեալս անաւրէնութր., նուստս տեսակաւ,  
ծերացեալս մեղաք, անկեալս յորոգայթ որսողին,  
դաշնաւորեալս չարեաց, հեռացեալս յարդարութենէ,  
վիրաւորեալս յանցանաւք, ցաւանկեալս ծուլութր., եւ  
այլ բազում վնասիւք, զոր ոչ է ժամանակ ասել:

Ստեփաննոս քահանայ անուամբ եւ ոչ վարիւք,  
ցանկացեալ ածեղէն. իմաստից այսոցիկ, մեծաւ ցան-  
կութր. գրեցի զպատճառ ծննդեան փրկչին մերոյ Յի.  
Քի. որպ. ոք ի համատարած ծովուն սակաւ ինչ ջուր  
առեալ՝ այսպ. եւ ես ցանկացեալ աղբերահոս վարդա-  
պետութեանս, եւ մեկնութեանց տրուեական. տօնից,  
ոչ կարացի զբնան ամբարել, այլ յուսացեալ ի սր.  
յաղաւթս ձեր յողորմութի. Քի., ձեռն արկի, անար-  
ժան անձամբ գրեցի փոքր ի շատէ իմաստութենէ  
ածուսոյց. վարդապետացն մերոց. զի եթէ (ոք?) աշխա-  
տասիրութր. եւ մտադիւրութր. ընթեռնու, ուրախա-  
նա եւ բերկրի հոգով:

**ՅԱԻԵԼՈՒԱՄ Բ. 42.**

(No. 3603. Բ. Գրքի երես 46)

**Աւետարան, մագաղաթ, բոլորգիր, նկա-  
րագարդ, բայց վատ պահուած:**

322ա. Փառք ամենասր. ամենազաւր եւ կենդա-  
նարար սր. երրորդութե. հաւր եւ որդւոյ եւ հոգւոյն  
սրոյ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յամեն:

Սովորութի. է ածային. արանց միշտ եւ հանա-  
պաղ խոկեալ (s!) ածային. պատուիրանս ի տուէ եւ  
ի գիշերի միշտ զվերինն խորհել, ուր Քս. նստի ընդ  
աջմէ յԱյ.: Եւ վսն. բազում պատճառի բազումք փա-  
վագին ջեռմեռանդ սիրով եւ ըզձայի ցանկութր.:/

\*Թուղք. 448 քերթից.  
Բացի 224բ. յիշուած գրքերից մասն Թէոդոտիսի՝  
Եպիսկոպոս Անկիւրիոյ.  
ա) ի ծնունդն  
բ) Նորին Երրորդութեանն  
գ) Կիպրիանոսի Եպիսկոպոսի Ափրիկեցւոյ մատ  
Ողորմածութեան: